ՍՈՒՐԲ ՀՈՂ
ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՄ Է ՀՈՂԻ ՀԵՏ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵԼԻՑ 3.1-6

1 Մովսեսն արածեցնում էր իր աներոջ՝ Մադիամի քուրմ
Հոթորի հոտը: Նա, հոտը քշելով անապատի ետևը, եկավ
Աստծու լեռը՝ Քորեբ: 2 Տիրոջ հրեշտակը երևաց նրան մորենու
միջից կրակի բոցով: Մովսեսը տեսավ, որ մորենին կրակով
վառվում էր, բայց չէր սպառվում: 3 Մովսեսն ասաց. Մի գնամ ու
տեսնեմ այս մեծ երևույթը, թե ինչո՞ւ մորենին այրվելով չի
սպառվում: 4 Տերը տեսավ, որ նա դառնում է տեսնելու համար.
և Աստված մորենու միջից կանչեց նրան և ասաց. Մովսե՛ս,
Մովսե՛ս: Նա ասաց. Ահա ես այստեղ եմ: 5 Աստված ասաց. Մի՛
*մոտեցիր այս տեղին. **հանի՛ր կոշիկներդ քո ոտքերից,***
***որովհետև այն տեղը, ուր դու կանգնած ես, սուրբ հող է**: 6*
Նաև ասաց. Ես եմ քո հոր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը,
Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը: Եվ Մովսեսը
ծածկեց իր երեսը, որովհետև վախեցավ նայել Աստծուն:

Հարցն այն է՝ ինչպե՞ս կարող է երկրի հողը, փոշին ու կեղտը կապ ունենալ սրբության հետ:

Հետաքրքիր է, որ Աստվածաշնչում «սուրբ» բառը առաջին անգամ օգտագործվում է հենց այստեղ՝ Ելից 3.5-ում:

Ոչ երկնքում, ոչ տաճարում, ոչ էլ սուրբ քաղաքում:
Այլ՝ անապատում, սովորական հողի վրա, մի
մեղավոր հովվի Մովսեսի կյանքում:

Եբրայերեն “սուրբ” բառը՝ קֹדֶשׁ (qōdesh), գալիս է մի արմատից, որը նշանակում է «առանձնացնել, և նվիրել Աստծուն»:

Գործք Առաքելոց 13.2 – Սուրբ Հոգին ասաց. Առանձնացրե՛ք ինձ համար Բառնաբասին ու Սողոսին այն գործի համար, որին ես կանչել եմ նրանց:

1. ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Աստված չասաց՝ «գնա ինչ որ մի սուրբ տեղ»: Նա ասաց՝ ***«որտեղ կանգնած ես՝ սուրբ է»****:*

- *Աստված նույն ձևով է հայտնվում սերունդներին*

  Հեսու 5.15 – Հանի՛ր կոշիկներդ քո ոտքերից, որովհետև քո կանգնած տեղը սուրբ է: Եվ Հեսուն այդպես արեց:

  Ստեփանոսը, կանգնած մարդկանց առաջ, որոնց ձեռքերը լի էին քարերով, հիշեցնում է նույն դեպքը՝

  Գործք 7.33 – Տերը նրան ասաց Մովսեսին. Հանի՛ր ոտքերիդ կոշիկները, որովհետև այդ տեղը, որտեղ դու կանգնած ես, ***սուրբ հող է:***

Հովհաննես 8-ում մեկ այլ տեսարան է. մարդիկ նորից կանգնած են՝ քարերը ձեռքներին:

> *Հովհ. 8.7 – Հիսուսը վեր նայեց ու ասաց. Ձեզանից ով անմեղ է, թող առաջինը նա՛ քար գցի դրա վրա: Եվ դարձյալ ցած նայելով՝ գրում էր **հողի վրա:***

Ես հավատում եմ, որ երբ Հիսուսը գրում էր հողի վրա, Նա հիշեցնում էր Ելից 3.5-ի մոռացված ճշմարտությունը:

*Հանի՛ր կոշիկներդ քո ոտքերից, որովհետև այն տեղը, ուր դու կանգնած ես, **սուրբ հող է**:*

> *Աստված Մովսեսին չդատապարտեց իր անցյալի համար, այլ բարձրացրեց նրան իր կոչման մեջ:*

2. ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ Է ՀՈՂԻ ՀԵՏ՝ ՔՈ ՀԵՏ:

- *Աստված Եդեմի պարտեզում ընտրեց հողը՝ որպես Իր գործելու սկիզբ:*

*Ծննդոց 2.7 – Տեր Աստված մարդուն ստեղծեց **հողի (ăḏāmâ, հողից մարդ) փոշուց** և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ:*

*Եսայի 64.8 – Եվ սակայն, ո՛վ Տեր, դու ես մեր Հայրը. **մենք կավն ենք**, **դու՝ մեր բրուտը**, մենք բոլորս քո ձեռքի գործն ենք:*

- *Փոշին ներկայացնում է՝ մարդկայնությունը, մեր թուլությունն ու կոտրվածությունը: Իսկ Բրուտը ասում է՝ Ես քեզ այնտեղ կհանդիպեմ:*

3. ԴՈՒ ՊԱՐԶԱՊԵՍ ՀՈՂ ՉԵՍ... ՔՈ ՄԵՋ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, ՈՐՊԵՍ ԳԱՆՁ ԿԱՎԵ ԱՆՈԹԻ ՄԵՋ:

*Բ Կոր. 4.7 – Բայց այս **գանձն ունենք** կավե անոթներում...*

*Ա Կոր. 3.16 – Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճարն եք, և **Աստծո Հոգին** բնակվում է ձեր մեջ...*

Պողոս առաքյալը այստեղ ասում է, որ դու պարզապես «կավե անոթ» չես–դու Աստծո բնակարանն ես...

Քո ներսում կա այն, ինչ Մովսեսը տեսավ այրվող մորենու մեջ: Աստծո սրբությունը հիմա քո մեջ է ապրում...

4. ՍՐԲՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԽՈՆԱՐՀՈՒՄՆ Է՝ ԿՈՇԻԿՆԵՐԸ ՀԱՆԵԼԸ

6 ...Եվ Մովսեսը ծածկեց իր երեսը, որովհետև վախեցավ նայել Աստծուն:

Հակոբոս 4.7-8 – Արդ հնազանդվե՛ք Աստծուն, դիմադրե՛ք սատանային, ու նա ձեզանից կփախչի: Մոտեցե՛ք Աստծուն, և նա կմոտենա ձեզ: Մեղավորնե՛ր, մաքրե՛ք ձեր ձեռքերը, երկմտողնե՛ր, մաքրե՛ք ձեր սրտերը:

*Սաղմոս 51.10 – Մաքուր **սի՛րտ ստեղծիր** իմ մեջ, ո՛վ Աստված, և ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում:*

- *Դավիթը, իր կոտրվածության մեջ, չխնդրեց նոր իրավիճակ... չխնդրեց նոր հնարավորություն...*

  *Նա խնդրեց մի բան՝ մաքուր սիրտ **ստեղծիր**:*

  *Սա նույն բառն է, որ օգտագործվում է Ծննդոցում՝ երբ Աստված **ստեղծեց** (bārā') աշխարհը:*

  Այսինքն՝ Դավիթը ասում է՝ «Աստված, արա իմ ներսում այն, ինչ միայն Դու կարող ես անել»:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ:

Այսօր, Տե՛ր Աստված իմ, վերցրու իմ «կոշիկները» և մաքրի՛ր իմ կյանքը, ինչպես Դու լվացիր աշակերտներիդ ոտքերը, մաքրի՛ր ինձ Քո խոսքով: